Արևմտեան Հայաստան
WESTERN ARMENIA NEWS

Ծաղկազարդ տոն

ԿԱՐԻՆ – Ահեկան ամսվա Լուսնակ օր՝ մայիսի 13 - Մայր բնության տոն. Հովանավոր՝ Անահիտ Դիցամայր Արեգ ամսվա Արեգօրվա (մարտի 21) Ամանոր-Զատիկից 54 օրանց, տոնվում է տարվա առաջին սատար տոնը, որըկոչ վում է Ծաղկազարդ:

Ծաղկազարդը մայր բնության ծաղկման արեգակնային անշարժ տոննէ :

Տոնի արեւածագից առաջ, կեսգիշերին արդեն երկնքի գագաթին հայ տնվումէ Կույսի համաստեղությունը, որը նաև հայտնի է Հասկ համաստեղություն որը նույնպես Անահիտ Դիցամոր խորհրդանիշն է, և հետևաբար տոնն իգական բնույթունի:

Ավանդության համաձայն,տոնի նախորդ օրը, աղջիկներն առավոտյան կժերով գնում են յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր յոթ տեսակ ծաղիկ, յոթ ծառի տերև և յոթ առվակի քար հավաքու մ: Իսկ կեսգիշերին կժերը դաշտում, կամ հետագայում նաև տան տանիքում թողնում էին բաց երկնքի տակ՝ի տես լուսնին և աստղերին, որ նրանք իրենց մոգական զորությունները փոխանցեն ջրին:

Առավոտյան այդ ջրից մի կում խմում, տան շեմին լցնում և մնացածը վիճակ կուժի մեջ լցնում: Բոլորն իրենց անձնական մի իր գցում էին այդ կուժի մեջև հետո վիճակ քաշում, մի իր հանում կժից, և ում իրը դուրս էր գալիս, կարդացած վիճակը նրաննէր լինում:

Օրվա ընթացքում տները զարդարվում է ին ծաղիկներով, աղջիկները ծաղկե պսակներ է ին կրում և Անահիտ Դիցամոր արձանը ծաղիկներով զարդարված շրջում էին փողոցներով:

Ծաղկազարդը մեծ շուքով, ազագայ ին երգ ու պարով էր տոնվում նաև Անահիտ Դիցամոր և Աստղիկ Դիցուհու տաճարներում:

Հայկեան Միաբանութեան Քրմական Դաս